ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Սեպտեմբերի 8 2023թ

N 360-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 22-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 98-Ն որոշման 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշում եմ՝

1. Ստեղծել ՀՀ Արագածոտնի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2008 թվականի ապրիլի 1-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» 22-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 9/8/2023 13:40:36 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հաստատված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2023 թվականի սեպտեմբերի 28-ի N360-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Ս. Մովսիսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետ, /հանձնաժողովի նախագահ/,

Ն. Դավթյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ, /հանձնաժողովի քարտուղար/,

Հանձնաժողովի անդամներ՝

Կ.Թաթուլյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի պաշտոնակատար,

Հ.Օհանյան - Միասնական սոցիալական ծառայության Աշտարակի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Խ.Գրիգորյան - Միասնական սոցիալական ծառայության Ապարանի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Լ.Գրիգորյան - Միասնական սոցիալական ծառայության Թալինի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Ն.Անտոնյան - Միասնական սոցիալական ծառայության Ծաղկահովիտի տարածքային կենտրոնի պետ, /համաձայնությամբ/,

Է.Փարվանյան - Աշտարակի համայնքապետարանի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ, /համաձայնությամբ/,

Ն.Մելքոնյան - Թալինի համայնքապետարանի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ, /համաձայնությամբ/,

Լ.Ղարիբյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

Մ.Շահազիզյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Մովսիսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Գասպարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ,

Շ.Նիկողոսյան - Ապարանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջատար մասնագետ, /համաձայնությամբ/,

Ա. Աբգարյան - «Թալին Հույս» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ, /համաձայնությամբ/,

Ժ. Ավետիսյան - «Արայի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ, /համաձայնությամբ/,

Ռ. Գրիգորյան - -«Դեպի Հույսի Լույս» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ, /համաձայնությամբ/,

Ն. Սարգսյան - -«ՍԵՄԱՆՏ» սոցիալական կրթական հասարակական կազմակերպության նախագահ, /համաձայնությամբ/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ